

Ս. ԻՐԵՆԷՆԻՍՍԻ «ՅՈՅՑՔ»Ը ԵՐԿՐՈՐԴ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ.

Des Heiligen Irenaeus Schrift zum Erweis der apostolischen Verkündigung.—Aus dem Armenischen übersetzt von Dr. Simon Weber ord. Professor an der Universität Freiburg in Br.—Kempten und München, 1912 (im II Bande der Bibliothek der Kirchenväter.)

1904 թ.-ի դեկտեմբերին, Երևանի թեմ.-ի փոխանորդութեան պաշտօնում՝ նայում էի քաղաքի կաթողիկէ ս. Աստուածածին եկեղեցում պահուած ձեռագիրները, երբ պատահամար մի ձեռագրի մէջ դառյ քրիստոնէական Բ. դարու նշանաւոր հեղինակ, առաքելական հայր՝ ս. Իրենէոսի գրուածքների հայերէն թարգմանութիւնը: Այդ գրուածքներն են՝ հեղինակի մինչ այդ միակ, այն եւ լատիներէն թարգմանութեամբ՝ յայտնի եղած «Ընդդէմ հերձուածոց» մեծարժէք երկասիրութեան Դ. և Ե. գրքերը, որ 1910 թ.-ին, Թաւրիզում իմ գրից ու գրականութիւնից կտրուած լինելու պատճառով՝ հրատարակեց Ե. Տէր Մինասեան «Texte und Untersuchungen» քաղմահատոր ժողովածուի մէջ*, և նոյն հեղինակի «Եոյցք առաքելական քարոզութեանն», անունով միայն ծանօթ և ուրիշ ոչ մի լեզուով չմնացած, փոքր աշխատութիւնը, որ Ե. Տէր Մինասեանի հետ գերմաներէն թարգմանելով՝ բնագիրն ու թարգմանութիւնը հրատարակել ենք նոյն ժողովածուի մէջ 1907 թ.-ին**, իսկ գերմաներէն թարգմանութիւնն առանձին լոյս է տեսել յաջորդ 1908 թ.-ին: 1907 թուին այս գրուածքը բազուում հայ քաղաքականների պատար և գիմնագիրոնի ուսուցիչ Տումիմի հետ ուսուերէն էի թարգմանել, բայց յետոյ յայտնուեց, որ միաժամանակ նոյնը գերմաներէնից ուսուերէն է թարգմանել, Պետերբուրգի Հոգևոր Ճեմարանի ամսագրում և առանձին գրքով հրատարակել պրոֆ. Սաղարդա***, ու

* Irenäus, Gegen die Häretiker. Leipzig, 1910. միայն յառաջարանը գերմաներէն:

** Des heiligen Irenaeus Schrift zum Erweis der apostolischen Verkündigung. Leipzig, 1907. Տե՛ս. Արարատ. 1907, յունուար. եր. 39. Գ. զ. Յովս.-ի «Մի կարեւոր գիւտ» ծառենախօսութիւնը:

*** Ново-открытое произведение св. Иринея дionскаго. Извлечение изъ журнала «Христианское Чтение», 1907 г.

մեր թարգմանութիւնը մնաց մինչև այժմ անտիպ։ Իսկ այս գրուածքի անգլիերէն թարգմանութիւնը, որ կատարել եմ թաւրիղում Ամերիկական միասնայի տեսուչ Վիլսոնի հետ՝ տպուում է և հայերէնը նապարով մէկ տեղ լոյս կտեսնէ շուտով Փարիզում PARY. OY. ժողովածուի մէջ։

Նոյն այս գրուածքն ահա, ինչպէս յօդուածիս վերնագիրը ցոյց է տալիս, մի նոր գերմաներէն թարգմանութեամբ հրատարակուել է անցեալ տարի։ Երբ այդ թարգմանութեան մասին ամիսներ առաջ ինձ տեղեկութիւն հասաւ, զարմացած հարցնում էի ինքս ինձ, ինչք կարող է պատճառ եղած լինել այդպիսի մի աւելորդ աշխատութեան, քանի որ մեր գերմաներէն հրատարակութիւնը հրապարակի վերայ էր. մեր նախնեաց մատենագրութեան մէջ քիչ կան գրուածքներ, որ կարժէր թարգմանութեամբ ծանօթացնել եւրոպական հաւարակութեանը՝ փոխանակ ծանօթը նորից թարգմանելու, արդեօք աւելի օգտակար դորժ արած չէր լինի այդպիսի աշխատութիւն յանձն առնողը, եթէ նոյն Իրենէոսի միւս գրուածքի հայերէն զանուած զլուսները, լատիներէնի հետ համեմատելով՝ տարբերութիւնները ցոյց տար, կամ թարգմանութեամբ ծանօթացնէր, Լիակայն երբ, պրոֆ. Վերէրի նոր թարգմանութիւնը գեռ շտեպած՝ «Հանդէս ամսօրեայ»-ի 1912 սեպտեմբեր տետրակում (եր. 558) է. Ա. Վարդանեանի մատենախօսականը կարդացի այդ աշխատութեան մասին, շատ բան պարզուեց։ Արժէ ի մօտոյ ծանօթանալ այդ շնաշխարհիկ մատենախօսականին. դա մի գոհար է իւր տեսակի մէջ, արտայայտութիւն մի առանձնայատուկ ոգու, որ ըստ երևութին սպառնում է նոր դարագլուխ կազմել մեր Մխիթարեան հայրերի բազմաբեղուն գործունէութեան գրական աստղարիզում։ Հայր մատենախօսան այսպէս է պատճառարանում նոր թարգմանութեան կարեօրութիւնը. «Յոյգրի առաջին հրատարակութեան ու թարգմանութեան անհատնում սխալներն ու գայթակմները բազմաթիւ ուղղագրական առաջարկութիւններու առիթ տուին ազգային և օտար թերթերու մէջ։ Իրենեայ սկզբունքներուն ու վարդապետութեան թիւր հասկացողութիւնը և անխմատ ու անկապ հատուածներու շարքը թարգմանութեան մէջ, սխալաւոր բառերով ու ասութիւններով խճողուած հայերէնը՝ բնագրին մէջ հարկ էր որ կանուխ թէ անագան անգործածութեան դատապարտէին աշխատասիրողներու ձեռնարկը ինչ և արժած ըլլար»։

Ինչպէս տեսնում էք, վերապատուելի Հ. Մխիթարեանը բոլորովին անպէտք է դանում՝ ոչ միայն մեր կատարած առաջին թարգմանութիւնը, այլ և ամբողջ հրատարակութիւնը, մինչև անգամ հայերէնը համարում է նա սխալաւոր բառերով ու ասութիւններով խճողուած, պարզ չէ՝ արդեօք մեզ երկու հրատարակիչներին այն-

քան տգէտ համարելով, որ մեր աչքի առաջ եղած ձեռագիրը ուղիղ արտագրել չենք կարողացել, մինչ ինքը աներևոյթ դօրութեամբ Վիննայից ա. էջմիածին ուղիղն է կարդում ձեռագրի մէջ. թէ մեղադրելով Յովհաննէս Արքայեղբօրը, որ սխալ է արտագրել տուել, կամ դուցէ նոյն ինքն հայ թարգմանչին, որ վատ է թարգմանել, եւ ինչպիսի տարօրինակ երևոյթ. մեր այդ անպէտք ու սկզբից եւեթ անգործածութեան դատադարտուած հրատարակութիւնը անցել է պրոֆ. Հատնակի ձեռքը, եւ նա փոխանակ դէն ձգելու՝ արժան է համարել իւր հրատարակութեանց շարքի մէջ առնել, հետք իւր դիտողութիւններն ու ծանօթութիւնները կցել եւ յառաջաբանի վրայ հետեւեալ համառօտ վկայութիւնն աւելացնել. «Թէպէտ ես կանխօրէն լաւագոյն փատահութիւն էի տածում դէպի երկու հրատարակիչների գիտութիւնն ու կարողութիւնը, այնուամենայնիւ բոլորովին ապահով կերպով չարժած լինելու համար՝ խնդրեցի իմ պաշտօնակից պրիմատիդոցենա ալ. Դր. Ֆինկին, աչքի ածցնել քնագիրն ու թարգմանութիւնը՝ նա հաստատեց այս աշխատութեան փատահելի ու պատուական լինելը, եւ շատ քիչ էր սրբագրել: Մենք միասին զգուշութեամբ մի քանի տեղ միայն ուղղեցինք ընտիր թարգմանութեան սօճելու Ուրեմն հանդուցեալ յայանի հայագէտ Ֆինկին էլ, որ, այս հրատարակութիւնը աչքի ածցնելուց մի քանի ամիս առաջ միայն, իւր մի գրութեան մէջ խիստ թշնամական վերաբերմունք էր ցոյց տուել դէպի մեզ՝ երկու հրատարակիչներս, հմայուած է եղել, որ Հ. Վարդանեանի «սխալաւոր բառերն ու ասութիւնները» չի նկատել, պարսուանքի տեղ չի գտել, այլ ստիպուել է նպաստաւոր կարծիք յայտնել:

Ի՞նչ արժէք կարող է ունենալ սակայն մեր անզուգական մատենախօսի մօտ մի Ֆինկի կամ Հատնակի կարծիքը, քանի որ վերջինս ինքն էլ ազատ չի մնում նորա զօրաւոր քննադատութեան անխնայ հարուածներից: «Իրենեայ սկզբունքներուն ու վարդապետութեան» մասին մենք հրատարակիչներս ոչինչ չենք գրել, այդ նկատմամբ դիտողութիւններ արել է Հատնակը՝ մեր հրատարակութեան կղած ծանօթութիւնների մէջ. նա է բաժանել հատուածների թէ թարգմանութիւնն ու թէ քնագիրը, եւ ահա աշխարհահայակ մեծ գիտնականը, որին յատկապէս քրիստոնէութեան առաջին 3 դարերի պատմութիւնն ու գրականութիւնը աւելի լաւ ծանօթ են, քան Հ. Վարդանեանին իւր աղօթամատոյցը, որի Դաւանանքների պատմութեան հաստ հատորները կանատակին էր միշտ դասախօսութեան դալիս մեր ժամանակի կաթոլիկ աշխարհի առաջնակարգ պատմագէտ Արքէ Դիւշէնն իսկ, որ անպայման մեծ հեղինակութիւն է ժամանակակից բոլոր իսկական պատմագէտների համար՝ նաեւ ուրիշ շրջանների վերաբերեալ շատ խնդիրներում,— Հ. Վարդանեանի քննադատական բովի մէջ ներ-

կայանում է «թիւր հասկացողութեան» տէր, «անիմալա ու անկապ հաստատմանը» շարքը կազմող ու վաւերացնող (թէպէտ հաստատմաների այդ բաժանումը պահել է նաև Վերէր իւր թարգմանութեան մէջ, մասերի նոր բաժանում աւելացնելով, ուր անում է ընդգրծարի շեղումներ հաճախի ցուցումներին)։

Բանն այստեղ համարուց յետոյ՝ թուում է թէ կարելի չէր այլ ևս չըջարէն վերաբերուել դէպի Հ. Վարդանեանի «մատենախօսականը», այլ պէտք էր բաւականանալ իսկ յայտնելով, որ պատկանի «Հանդէս ամսորեայի» խմբագրութիւնը տեղ է տուել այդ միատեմաւոր արտադրութեան, մինչ թերթի խմբագիրն իսկ՝ Հ. Սկինեան, նոյն թերթի 1910 յուլիս-օգոստոս եր. 200 շ. 41. Իրենէս հայ մատենագրութեան մէջ՝ վերնագրով իւր յօդուածում՝ յայտնում է, որ իմ դատած ձեռագրի Իրենէսի գրուածոց «հայերէն բնագիրները լաւ հասած են մեզի և ըստ այսմ արժանի են լիովի վստահութեան», որ իրաւամբ այդ գրուածները «ջանացած են նրատարակիչը ներկայացնել այնպէս, ինչպէս ձեռագրի մէջն է» և որ Իրենէսի «ցոյցը»-ին կցած հայերէն թարգմանութիւնը «չաւ յաջող է, ինչպէս վկայած է նաև Գ. Ն. Ֆինկ... թէ և ինչ ինչ անձնատիւներ դանուին հոս և հոն»։ Սակայն առանձին ուշադրութիւն ենք դարձնում Հ. Վարդանեանի մատենախօսականի վրայ այն պատճառաւ, որ նա ըստ երևութիւն շատ մօտիկ ստընչութիւն ունի նոր գերմաներէն թարգմանութեան հետ։

Պրոֆ. Վերէր իւր թարգմանութեան նախադանում երկու ուրիշ յարգելի Մխիթարեանների շարքում շնորհակալութիւն է յայտնում նաև Հ. Վարդանեանին՝ «սիրալիր խորհուրդների» համար, յետոյ էլ իւր ծանօթութիւնների մէջ ամէնից աւելի նորա կարծիքներն ու ուղղումներն է յատաջ բերում։ Մեզ յայտնի չէ, թէ որչափ հմուտ է հայերէնին ինքը Մեծ, ուսուցչապետը, որի «կաթաղիկէ և կեղեցին հայաստանում» գիրքը լոյս է տեսել 1903 թ.-ին՝ փաստարանելու համար գլխավորապէս (առիթ կունենանք երեի ուրիշ տեղ ջոյց տալու, թէ մեր ժամանակի պատմագիտութեան հանդէպ օրքան անթոյլադրելի միամտութեամբ), ինչպէս վերնագրից երևում է, Չաճեանի օրերից ի վեր Մխիթարեան հայրերի յամառօրէն պաշտպանած այն տարօրինակ տեսութիւնը, թէ մեր և կեղեցւոյ նախնական չըջանների հայրերը, սակաւ «ներձուածողների» բացառութեամբ՝ բարի կաթողիկէներ են և դեւ։ Եթէ այժմ էլ Մեծ, ուսուցչապետը աշխատութիւն յանձն առած լինէր նորա համար, որ ջերմեռանդ կաթողիկէներ ա. Իրենէսի գրուածքը կարգային՝ ոչ թէ մեր, «ներձուածող» և կեղեցւոյ պաշտօնեաներիս, թարգմանութեամբ և անաստուած Հառնակի բացառութիւններով, այլ իւր «ուղղադաւան» թարգմանութեամբն ու մեկնութեամբ,

մենք ոչինչ չէինք ունենայ ի հարկէ գորա դէմ: Շատ հասկանալի
կդանէինք մանաւանդ, եթէ նա մեր՝ օտարներին, գերմաներէնք բա-
ւականաչափ կոկ և զիւրահնչիւն չհամարելով՝ կամենար աւելի լաւ
ոճով թարգմանել, «հոգևոր» ընթերցանութեան համար: Բայց երբ
նա, թէպէտ շատ աւելի համեստօրէն խօսելով, քան իւր ջատագով
չ, վարդանեանը՝ նոր թարգմանութիւնը կարեւոր է տեսնում այն
պատճառաւ, որ մեր թարգմանութիւնը «չի կարող բոլոր կէտերում
ուղիղ նկատուել», և խոստանում է ուրեմն աւելի ուղիղ թարգ-
մանութիւն ընծայել, հարց է ծագում ըստ ինքեան. միթէ գեր-
մանացի գիտնականն աւելի լաւ է հասկանում հայերէնը, քան մենք
երկուսս հասկացել ենք: Յամենայն դէպս նորա թարգմանութեան
մի քանի կէտերում, ուր ըստ երևութին «խորհրդատուների»
աջակցութիւնը պակաս է եղել՝ հանդիպում ենք այնպիսի թիւ-
րիմացութիւնների, որոնց միայն օտարազգին կամ անհմուտ
հայադէտը ենթարկուել կարող էր: Այսպէս օր. Գլ. 55 «Տինա»
բացականչութիւնը ծանօթութեան մէջ բերում է «Aina» տա-
ռադարձութեամբ՝ շփոթելով անշուշտ հայերէնի ա և օ տառե-
րը, երևի չ. Տաշեանի ձեռագրից, որ տուել է նրան այդ ծանօ-
թութեան նիւթը, որովհետև մեր տպագրի վրայ այդ տառերը շփո-
թել չէր կարելի: Գլ. 3 «անպախ», որ մենք թարգմանել ենք unan-
getastet (Առձ. բառարանում՝ ձեռք չդպած, անվնաս, ամբողջ), երևի
«անվախ» կարդալով թարգմանել է unerschrocken. Գլ. 67 «և դայ-
սոսիկ ասնելովն» հաւատաացի Աստուծոյ Որդի գոյ»—մենք թարգ-
մանել ենք, «indem er das verwirklicht, soll er als Sohn Gottes ge-
glaubt werden», իսկ ինքը թարգմանել է. «Und weil diese Werke
geschehen, soll man an die Ankunft des Sohnes Gottes glauben»—
«գոյ» դերբայը երևի «գալ» կարդալով, «ասնելովն» բառին այնպիսի
իմաստ և ամբողջ նախադասութեանն այնպիսի շարայարութիւն
ընծայելով, որ փոքր ի շատէ կարգին հայերէն իմացողը չպիտի
անէր: Այս պատճառով թուում է, թէ թարգմանչի «խորհրդատու-
ների» դերը այս և այն կարծիքը յայտնելով չի սահմանափակուում,
այլ նորա՝ յատկապէս չ. վարդանեան, զգալի օգնութիւն են մա-
տուցել նաև թարգմանութեան գործում, և այս օգնութեան վրայ
վստահացած երևի Մեծ, ուսուցչապետը ենթադրում է, թէ իւր ներ-
կայացրած թարգմանութիւնն աւելի ուղիղ է: Միւս կողմից, չ. վար-
դանեան ջատագովելով այդ նոր թարգմանութիւնը և պախարա-
կելով մեր գործը՝ միաժամանակ իւր ապրանքի արժէքը բարձրա-
ցրած է լինում: Ուստի վերջնէնք ամէնից առաջ այն օրինակը, որ
նա յառաջ է բերել, իբրև թէ «ըստ պատահման բացուած էջէ մը»,
ցոյց տալու համար, թէ «ինչ անանցանելի վիճեր կան բացուած
նախկին ու այս թարգմանութեան մէջ». թող ընթերցողը տեսնէ նոր

Թարգմանչի ու իւր ջատագովի շնորհքը միանգամայն:

Իրենէս՝ ուղղելով իւր գրուածքը իւր բարեկամ Մարկիա-
նոսին, նպատակ է դրել հաստատելու նորա հաւատը՝ այն համոզ-
մամբ, որ միայն ճշմարիտ հաւատը կարող է լուսաւորել մարդու
կեանքի ճանապարհը, նիւթական ցանկութիւններից և ամէն շեղու-
մից ազատ պահել, ուղիղ դէպի Երկնքի արքայութիւն առաջնոր-
դել: Եւ օրովհետեւ, ասում է նա, մարդս բաղկացած է հոգուց և
մարմնից, ըստ այդմ և երկու տեսակ գայթակման ապաւնում են
նրան. ապա աւելացնում է (Գլ. 2). «Եւ է մարմնոյ սրբութիւն ար-
գելաւորութիւն, ժուժկալութեան յամենայն ամաթալի իրաց և
յամենայն անիրաւ գործոց, և անձին սրբութիւն զառ ի Աստուածն
հաւատ ամբողջ պահելն: Այդ տողերը մենք թարգմանել ենք հե-
տեւաւ իմաստով. «Մարմնի սրբութիւնը արգելադրի միջոց է՝ ամէն
ամաթալի բաններից և անիրաւ գործներից ժուժկալ մնալու, իսկ
հոգւոյ սրբութիւնը՝ հաւատն առ Աստուած անաղարտ պահելու
համար»: Հ. Վարդանեան հաւատացնում է, որ մեր տուածը թարգ-
մանութիւն չէ, այլ «ինքնագրութիւն», և մենք այդպէս շարադրել
ենք մեզնից նորա համար, որ սխալ ենք ըմբռնել «արգելաւորու-
թիւն» բառը (Առձ. բառարանում՝ ժուժկալութիւն, ինքը զինքը զսպե-
լը եայլն): Ինչպէս է հասկանում արդեօք այդ բառը պրոֆ. Վերէր,
որ նոյն տողերը թարգմանել է. «Ուստի պէտք է պահել թէ մարմնի
սրբութիւն՝ մշտական ժուժկալութիւնը ամէն անպարկեշտ բանե-
րից և ամէն անարդար գործներից, թէ հոգւոյ սրբութիւն՝ առ Աս-
տուած հաւատոյ անաղարտ պահանութիւնը»: Ո՞րն է այս թարգ-
մանութեան մէջ «արգելաւորութիւն» բառի համապատասխան ար-
տայայտութիւնը. zu beobachten? իսկ beständig որակից է գտել
թարգմանիչը, ինչու «ամաթալի» բառը «unsechamhafte» է թարգմա-
նում. այդ է «ինքնագրութիւնը», թէ նախադասութեանց կապակ-
ցութեանը և բառերի ճիշտ իմաստին հետեւելով մեր տուած թարգ-
մանութիւնը: Բայց եթէ նոր թարգմանութիւնն աւելի ուղիղ իսկ լի-
նէր, քան թէ մեր տուածը, որ ակնեքն է թէ չէ, ինչ անտեղի
համարաւակութիւն այնուամենայնիւ՝ «երկնաբերձ տարբերութիւն»
անուանել այդպիսի պատահական գերադանցութիւն:

Արդ, եթէ զբառ պատահման բացուած էջի մը համեմատու-
թեամբ՝ քաջագործով մատենախօսի բերած շախշախիլ փաստը, որ
մի հարուածով մեր կատարած աշխատանքը պիտի ոչնչացնէր և նոր
թարգմանութիւնը «երկնաբերձ» բարձրութեան վրայ դնէր՝ այս
բնաւորութիւնն ունի, կարելի է արդէն եզրակացնել, թէ ինչ ար-
դիւնքի կհասնենք, եթէ մենք ինքներս ուրիշ էջեր բանանք և ու-
շադրութեամբ համեմատենք:

Նոր թարգմանիչը ձեռագրի ամբողջ գրուածքի համար տուած

վերնագրին չհաւանելով, որ գրեթէ նոյնութեամբ պահուած է նորա մասին եղած միակ պատմական վկայութեան՝ Եւսեբիոսի եկեղ. պատմութեան մէջ^{*}, ընդարձակել է այդ վերնագիրը և դարձրել. Erinnerung über die Grundlehren zum Erweis der apostolischen Verkündigung—«Յիշատակ հիմնական վարդապետութեանց մասին՝ յապացոյց առաքելական քարոզութեան», հիմնուելով, ինչպէս ասում է նախաքանի մէջ, Իրենէոսի իւր իսկ խօսքերի վերայ (Գլ. 1). «Իբրեւ թէ գլխաւորագոյն յիշատակարան առաքեմք քեզ, որ թարգմանել է. Wir senden Dir diese Darstellung als eine Erinnerung über die Grundlehren—«Ուղարկում ենք Քեզ այս նկարագրութիւնը, իբրեւ յիշատակ հիմնական վարդապետութեանց մասին»: Թէ սրտեղից է վերցնում թարգմանիչը, diese Darstellung և մանաւանդ über die Grundlehren բառերը, և թէ ինչու, եթէ նոյն իսկ կարելի լինէր յիշեալ նախադասութիւնը իւր հասկացած ձեով թարգմանել՝ պէտք էր սորա վերջին բառերը վերցնել և վերնագրի վրայ դնել, հրաժարում ենք հասկանալուց, գուցէ կարողանայ՝ ասղամէջերում կարգալու սովորութիւն ունեցող և իւր կարգացածն ամենայն վստահութեամբ իբրեւ վաւերացրութիւն ներկայացնող, Հ. Վարդանեան այդ ևս բացատրել: Մենք թարգմանել ենք այդ նախադասութիւնը — Als ein wichtiges Erinnerungsschreiben schicken wir es Dir—«Իբրեւ մի կարեւոր յուշագիր ենք ուղարկում այս Քեզ»: Գուցէ աւելի ուղիղ կ'լինէր «Գլխաւորագոյն յիշատակարան» թարգմանել՝ «ամենամփոփ յուշագիր», որովհետեւ «գլխաւորել» բայը «Յոյգք»ի մէջ շատ անգամ դորժ է անուած «ամփոփել, բովանդակել» մտքով, և «գրլխաւորագոյն» կարող է նոյն իմաստով կազմուած լինել, մենք հետեւել ենք սովորական իմաստին: Բայց թարգմանել, «մի յիշատակ, յիշողութիւն կամ յուշարար հիմնական վարդապետութեանց մասին» — չգիտենք ինչ լեզուական և բանական օրէնքով:

Պակաս տարօրինակ չէ մեզ համար նոյն պարբերութեան անմիջապէս նախընթաց ասացուածի թարգմանութիւնը և մանաւանդ, այդ թարգմանութեան հակառակ՝ Տէր ուսուցչապետի նոյն խօսքերից հանած ընդարձակ եզրակացութիւնը:

Բնագիր	Մենք թարգմանել ենք	Ինքը թարգմանել է
«Ի ձեռն համառաւարից»	in kurzen Worten die	zu Deiner Befestigung

* Թէպէտ Եւսեբիոս Ελε ἐπίδειξεν է գրում՝ «Ի ցոյցս», բայց կարելի է ենթադրել, թէ այդպէս հօլովել է նա ինքը, նախքոյ նախադասութեան բայի հետ համաձայնեցնելու համար, մինչ իւր տեսածի մէջ Ἐπίδειξεν = «Յոյգք» էր, ինչպէս եւ թարգմանուած է հայերէնում:

զճշմարտութեանն ցուցանել քարոզութիւն՝ առ ի հաստատելոյ զքահաւատոյն	Verkündigung der Wahrheit darzulegen, um Deinen Glauben zu befestigen	im Glauben möchten wir Dir in Kürze zeigen, wie die Wahrheit verkündigt wurde.
--	---	--

Ըստ այս նոր թարգմանութեան ուրեմն Իրենէոս կամեցել է համառօտակի ցոյց տալ, թէ ինչպէս է ճշմարտութիւնը (այսինքն քրիստոնէութիւնը) քարոզուել, որ նոյն է թէ՛ կամեցել է մի նոր համառօտ «Գործք ատօքելոց» գրել: Սակայն զարմանալին այն է, որ «Ներածութեան» մէջ պրոֆ. Վերէր այս առաջաւածի ոչ թէ իւր թարգմանութիւնն է յառաջ բերել, այլ մեր թարգմանութիւնը*, և սորա մէջ բոլորովին տարբեր իմաստ է գտել: Փակագծի մէջ նա նկատում է, թէ իրր մեր թարգմանութիւնից պարզ չի երևում՝ արդեօք Իրենէոսը կամեցել է յայտնութեան բովանդակութիւնը ցոյց տալ, թէ այդ յայտնութեան ճշմարիտ լինելը: Մեզ համար շատ որոշ է եղել ի հարկէ, որ խօսքը յայտնութեան կամ աւետարանական ճշմարտութեան նիւթի մասին է. մինչդեռ նոր թարգմանիչը՝ մոռանալով, թէ ինքն ինչպէս է թարգմանել, և կարգալով այստեղ կարծեա՝ զզճշմարտութիւն քարոզութեանն ցուցանել, պնդում է թէ, այս և յաջորդ խօսքերից պէտք է հետեցնել, որ Իրենէոսի նախատակը եղել է քրիստոնէական վարդապետութեան ճշմարիտ լինելը ընդհանուր հիմունքներով հաստատել, և ապա այդպիսի ըմբռնման վրայ կառուցանում է իւր «Ներածութեան» գրել թէ ամբողջ շէնքը:

Խնդիրն այն է, որ պրոֆ. Հաննակ և նրա հետ ուրիշ քննադատներ Իրենէոսի նորագիւտ գրուածքը համարում են իւր ժամանակի քրիստոնէական վարդապետութեան ամփոփումը, հնադոյն «Քրիստոնէական հաւատոյ հրահանգը»—«կատեխիզմը»: Հաննակ իւր դիտողութիւնների վերջում մատնացոյց է արել, թէ այս գրութեւածքի մէջ ինչպիսի «պարզութեամբ և ուժով, գործնական նախատակաւորութեամբ և ջերմութեամբ» ներկայացրել է հեղինակը իւր, որ նոյն է թէ երկրորդ դարու վերջի՝ քրիստոնէութեան հաւատը. որ այստեղ «հոգին ու ճշմարտութիւնը, համոզումն ու բարոյական գործն ամէն ինչ են», նուրիապետութեան և պաշտամունքի վերաբերեալ տեսութիւններ բոլորովին չկան: Պրոֆ. Վերէր համաձայն չէ դորան, այլ գտնաւ կաթոլիկական հայեցողութեամբ պնդում է, թէ ինչ որ այս գրութեւածքի մէջ չկայ՝ չի նշանակում, թէ չկար ժամանակի քրիստոնէութեան մէջ. թէ եթէ քրիստոնէական հաւատոյ հրահանգ լինէր այն, նորա մէջ պիտի չպակասէին հանդերձեալ կեանքի վե-

* Արիշ մի երկու տեղ էլ նա պիտէս է վարուել, դուցէ զգալով, որ մեր թարգմանածն աւելի մօտ է բնագրին, քան իւրը:

բարերեալ ուսմունք և տասնարանեայ պատուիրանների բացատրութիւն, այսինքն այն ամէնը, ինչ որ պարունակում է այսօրուայ «Հասկացական կատեխիզմը»։ Սակայն Արդոյ ուսուցչապետի միամիտ և միատուժաւոր պատճառարանութիւնները ոչ ոքի չեն համոզի ի հարկէ։ Չէ որ Իրենէոս շատ որոշ կերպով իւր խորհրդածութիւնների հիմք դարձնում է «հաւատոյ քանունը», սկսում և վերջացնում է հաւատոյ այն երեք «գլուխներով, որ մկրտութեան հանդանակի էութիւնն են կազմում, և եթէ առանձնապէս ընդարձակ տեղ է տալիս փրկկազորութեան խորհրդի վերաբերեալ բացատրութիւններին՝ այդ եւ շատ հասկանալի է իւր ժամանակի համար. դորանով էլ նա չի ելնում հաւատոյ հանդանակի շրջանակից, այլ տալիս է դարձեալ իւր ժամանակի քրիստոնէական վարդապետութեան բովանդակութիւնը. և վերջապէս Գլ. 98-ի սկզբում կրկին մի անգամ նա իւր շարադրութեան համար շեշտում է՝ «Այս է քարոզութիւն ճշմարտութեան», որ Վերէր «Das ist die Predigt der Wahrheit» թարգմանելով՝ առանց նկատելու, որ բառացի կրկնութիւնն է Գլ. 1-ում իւր ուրիշ կերպ թարգմանած խօսքերի, յակամայից խոստովանում է, որ առաջ սխալ էր թարգմանել, և ուրեմն այդ սխալ թարգմանութիւնից հանած բոլոր եղբակացութիւններն էլ սխալ են։ Իսկ եթէ Իրենէոս հաւատոյ հիմնական կէտերը պարզաբանելիս աշխատում է նաեւ ս. Գրքի վկայութիւններով նոցա ճշմարիտ լինելն ապացուցանել, փրկչական տնօրէնութիւններն աւտուածային կանխապետութեամբ հաստատուած ցոյց տալ՝ միթէ նորա գրուածքը դադարում է դորանով քրիստոնէական վարդապետութիւն լինելուց և ջատագովութիւն դառնում, միթէ այժմ քրիստոնէական վարդապետութիւն ուսուցանելիս չեն աշխատում իւրաքանչիւր կէտ ս. Գրքի վկայութիւններով կամ այլ կերպ հաստատել։ Ջատագովութիւն հասկանալի է, երբ քրիստոնէութեան ճշմարտութիւնը ջատագովում են հեթանոսի առաջ, իսկ Իրենէոսի գրուածքն ստացողը չէ որ քրիստոնէայ էր։

Այսպէս թէ այնպէս, եթէ աւելի ճիշտ թարգմանութիւն տալու հետ Վերէրի երկրորդ նպատակը եղել է այս աշխատութեան ձեռնարկելիս, ինչպէս ինքն ասում է նախաբանում՝ առաջին հրատարակութեան մէջ Հառնակի արժարժած տեսութեանց հիմնական գծերի սխալ լինելը ցոյց տալ և աւելի ուղիղ ըմբռնում ընծայել նորադիւտ գրուածքի մասին, նոյնքան հեռու է մնացել նա այդ նպատակից, որչափ և առաջինից։ Առհասարակ նոր թարգմանութեան «ներածութեան» կամ ծանօթութիւնների մէջ չենք գտնում գրեթէ մի նոր դադափար կամ տեղեկութիւն, որ առաջին հրատարակութեան, կամ նորա մասին եղած քննադատութեանց մէջ չգրտնուէր, և կարելի լինէր ուղիղ համարել։ Հայերէն Իրենէոսի ինչ

լեզուից թարգմանուած լինելը մենք անորոշ էինք թողել՝ ասորե-
րէնի և յունարէնի մի քանի հետքերի վրայ միայն մատնանիչ ա-
նելով, որովհետեւ այդպիսի խնդիրներ վճռելը մեզնից աւելի ձեռն-
հասների գործ էինք համարում. բայց մեր յառաջարանից պարզ
պէտք է լինէր, որ մենք յունարէնից թարգմանուած լինելու կողմն
ենք, ինչպէս և ամէնից աչքի ընկնող փաստի (Ծննդոց գրքի առա-
ջին նախադասութեան տառադարձութեան) վրայ մենք արդէն մատ-
նանիչ արել էինք: Նոյնն ասպացուցանելու համար Վերէրից առաջ
ուրիշները շատ աւելի զօրաւոր փաստեր բերել են, քան նա է բե-
րում, ի միջի այլոց Հ. Ակինեան՝ իւր վերոյիշեալ յօդուածում (Հան-
դէս, 1910, թ. 7—8), ուր նաև թարգմանութեան ժամանակը որո-
շելու համար շատ աւելի լուրջ և բանաւոր տեսութիւն ենք գտնում:
Այս վերջին կէտի նկատմամբ խնդիրն այժմ զգալի կերպով պար-
զուում է մի նոր պատմական վկայութեամբ, որ է մամուլի ներքոյ
կողմ մեր նոր հրատարակութիւնը՝ Կոմիտաս կաթողիկոսի օրով
կազմուած «Կնիք հաւատոյ» ժողովածուն: Քանի որ այստեղ հատ-
ուածներ բերուել են Իրենէոսի գրուածներից՝ մի և նոյն թարգմա-
նութեամբ, գտնէ է, դարի սկզբում ուրեմն այդ գրուածները թարգ-
մանուած պատրաստ պիտի լինէին: Ընդունելու համար Հ. Ակինեանի
համարձակ կարծիքը, թէ նոցա թարգմանողը եղել է Վրթանէս
Քերթոզը, պէտք են աւելի հիմնաւոր փաստեր, քան նա արդէն տուել
է. բայց որ այդ գրուածները կարող են Վրթանէսի ժամանակ՝ Զ.
դարի վերջերում, թարգմանուած լինել, այժմ շատ աւելի հաւանա-
կան է գտնուում: Դորան հակառակ չի կարելի համարել նաև պրոֆ.
Կոնիքիւրի բերած լեզուական փաստերը*, որոնցով նա առընչութիւն
է ուղում ցոյց տալ Իրենէոսի և Փիլոնի գրուածոց թարգմանու-
թեանց մէջ, որովհետեւ եթէ եղիչէն և նման հեղինակներ մի դր-
ուածքից օգտուել են, այդ դեռ փաստ չէ գրուածքի Զ. դարու թարգ-
մանութիւն չլինելուն: Առաջին հրատարակութեան յառաջարանում
մեր յայտնած միտքն ևս, թէ Իրենէոսի գրուածոց թարգմանութիւ-
նը կարելի է ժամանակակից համարել «անապականութեան» խնդրի
շուրջ Հայոց և օտարների մէջ եղած վէճերի, այժմ աւելի է հա-
տատուում՝ այն տարբերութեամբ միայն, որ ինչպէս «Կնիք հաւա-
տոյ» ժողովածուի հրատարակութիւնը ցոյց կտայ, այդ վէճերը շատ
աւելի վաղ են սկսուել մեղանում, քան առաջ ենթադրում էինք:
Յիշուի պրոֆ. Վերէր, և նրան հետեւելով Հ. Վարդանեան՝ վստա-
հութեամբ պնդում են, թէ ալիոնի մարտիրոսը (Իրենէոս) բնաւ
միաբնեայ չէ, բայց ի հարկէ ոչ ոքի մտքով չի անցել նորան «միա-
բնեայ» դարձնել. խնդիրն այն մասին է միայն, որ նա շատ կարևոր

* Տես. Յուշարձան, գրական ժողովածոյ. Վիեննա. 1911, էջ 193 շ.

տեղ է տուել «անապականութեան» դադարաբաժին փրկագործութեան խնդրում և որ մեր հայրերը վերաբերեցին և՛ թեթիկ նորա դրուած-ներին, հաստատելու համար, որ յանձին Քրիստոսի մարդկային բնութիւնը աստուածային բնութեան ազդեցութեամբ անապական է դարձել: Իսկ այդ անժխտելի է:

Ինչ որ է, բաւական համարելով այսչափը՝ մօտաւոր դադար տուած լինելու համար, թէ Հ. Վարդանեանի փառաբանած նոր թարգմանութիւնը իւր ներածութեամբ ու ծանօթութիւններով սրշափ է հասել Հայաստանի և այլ գիտնականների տեսութիւնները սրբազրելու իւր կողմնակի նպատակին՝ դառնալով մեր բուն խնդրին և տեսնելով, թէ ինչ ասուելութիւններ է ներկայացնում այն գուտ իրրե թարգմանութիւն մեր կատարածի նկատմամբ:

Կներդնենք մի շարք օրինակներ առաջին իսկ կրկու գլուխներին և թողնելով այնպիսիները, որոնց մասին արդէն խօսք կդել է մնացածները կհամեմատենք:

Բնագիր	մեր թարգմանութիւնը	Վերէրի թարգմանածը
Գլ. 1. ա) Սիրելի իմ Մարկիանէ	Mein lieber Marcianus	geliebter Marcianus
բ) ի յաւիտենական կեանան տանի զմարդն	führt den Menschen in das ewige Leben	die Menschen zum ewigen Leben führt
գ) և զապացոյցս զիրացն Աստուծոյ ի ձեռն համառօտից ընկալեալ	und die Beweise der göttlichen Dinge durch ein Kurzes vernimmst	In Kürze sollst Du den Beweis der Göttlichkeit dieser Dinge erhalten
դ) բայց թաղումք եւ աղջամղչիւնք եւ ընդդիմահարք անտեսողացն հանապարհք	Aber zahlreich und dunkel und entgegengesetzt sind die Wege der Nichtsehenden.	Die Wege der Verblendeten hingegen sind zahlreich und holperig.
ե) և նա յերկնիցն տանի յարքայութիւն՝ միասորելով զմարդն Աստուծոյ, իսկ այսք իջուցանեն ի մահ՝ մեկնելով զմարդն յԱստուծոյ	Und jener führt in das himmlische Reich, indem er den Menschen mit Gott vereinigt, diese aber führen zum Tod hinab, indem sie den Menschen von Gott trennen	Jener Weg verbindet den Menschen mit Gott und führt zum himmlischen Reich, diese trennen den Menschen von Gott und führen abwärts zum Tode.
զ) զի մի թող տուեալ և կատեցեալք անցցեն	damit sie nicht nachlässig geworden and	damit sie nicht durch Wankelmüt in Sünde

մնացին ի նիւթական ցանկութիւնս	aus dem Gleise gekom- men, in materiellen Begierden stecken blei- ben	fallen und in der welt- lichen Begierlichkeit verstrickt bleiben
Գլ. 2. է) և պահեցէ ի զեղեցկութեան և յի- րում չափս	sie sich in der Schön- heit und in ihrem Masse halten wird	da behält er seine Schönheit und gebüh- rende Vollkommenheit
Ը) յօղութիւն	im Geiste	in den Geistern
Թ) գիտել զճշմարիտն բանիւք. և զմարմինն աղծել և զչարսութեանն կատարել զգործս	das Wahre in Worten zu wissen, den Leib aber zu verunreinigen und die Werke der Bosheit zu vollbringen	die Worte der Wahr- heit zu kennen, wäh- rend man seinen Leib der Unreinheit preis- giebt und in seinen Handlungen der Bos- heit dient
Ճ) և կամ զինչ իսկ բնաւ. կարէ աւդուա մատուցանել մարմնոյ սրբութիւն	Oder andererseits, welchen Nutzen kann eigentlich überhaupt die Reinheit des Leibes bieten	Was aber nützte es ferner, den Leib in Ehren zu halten
Մա) բանգի խնդան ընդ միմեանս այսքիկ և միարանին և մարտակից լինին, զի զմարդն յան- դիմանակաց արացեն Աստուծոյ	Denn diese freuen sich mit einander und verei- nigen sich und sind Kampfgenossen, damit sie den Menschen vor Gott stellen	In gegenseitiger Be- glückung und Harmonie sind sie berufen, sich als Kampfgenossen vor Gott zu stellen
Փբ) արդ, որք զէն Աս- տուածն չէ պաշտեն	Also diejenigen, die den Seienden Gott nicht anbeten	Wer nun aber das höchste Wesen nicht als Gott verehrt
Փգ) ապականին	verderben	den Untergang bereiten

Այսպիսի օրինակներ մենք կարող էինք ի հարկէ անվերջ բն-
րել նաև յաջորդ գլուխներից, բայց այսչափն էլ բաւական է. կար-
ծում ենք, որպէս զի ընթերցորդը համոզուի, որ նոր թարգմանու-
թիւնն ընդհանրապէս աւելի հետու է բնագրից, բայց է աւելա-
ցնում և պակասեցնում ըստ քմաց, իմաստը չեղաշրջում չառ տեղ
առանց պատճառի կամ թիւրիմացութեամբ. այսինքն՝ ճշգրիտ փո-
խադրութեան տեղ ընծայում է, 2. վարդանեանի մեղ համար գոր-
ծածած բառով ասենք՝ «ինքնագրութիւններ»՝ Ինչու, օրինակ, Գլ.
6 «անտար» թարգմանած է «unendlich» և չէ «untragbar», ինչպէս
մենք ենք թարգմանել^{*}. Կամ ինչու այնպիսի յայտնի պատմական

* Սաղարդա, հետեւելով պրոֆ. Կունցէին՝ թարգմանում է «не объ-
емлемый» — «unfassbar».

արտայայտութիւն, ինչպէս «անապականութիւն» բառը՝ թարգմանաւոր է «Unvergänglichkeit», և ոչ «Unverweslichkeit», մանաւանդ Գլ. 31 «կցօրդութիւն ընդունելութեան ասցուք զանապականութեանն» նախադասութեան մէջ՝ «ընդունելութիւն» բառն ևս սխալ հասկանալով և տալով այսպիսի ակներև սխալ միտք. «Anteil an dem Geschenke der Unvergänglichkeit gewinnen».

Երբեմն թուում է, թէ թարգմանիչը դիտմամբ ուրիշ անճիշտ բառեր է ընտրում, որ մեր թարգմանածից տարրեր լինի. օրինակ Գլ. 61 «Ծերունիքն» Իրենէոսի գրութեան մէջ շատ անդ պատահող և շատ որոշ նշանակութիւն ունեցող արտայայտութիւնը, որ մենք «die Ältesten» թարգմանել ենք, ինչպէս ընդունուած է, ինչ հարկ կար «die Alten» թարգմանելու, որով ընդհանրապէս նախնիք են հասկացուում, և ոչ Եփեսոսի յայանի երէցները. Երբեմն նա գործ է ածում այնպիսի արտայայտութիւններ և աւելորդ բառեր, որ չգիտես թէ որտեղից է վերցնում. օրինակ, Գլ. 23, «կարացեալք թողուլ զիւրեանց գործն», ինչու պիտի թարգմանուի «voll Kraft in ihrem Werke hinterlassen». Կամ Գլ. 24, «Եւ յառաջ անցելոց ժամանակաց» — «im Ablauf der folgenden Zeit». Կամ Գլ. 85, «և թշնամիք ամենեքին այնօրիկ» — «Die Zahl seiner Feinde in ihrer Gesamtheit besteht». Սակայն շատ անգերում էլ ակներև է թարգմանչի սխալ ըմբռնումը. օրինակ, Գլ. 24, «Եւ զի առաւելութիւն հաւատաց նորա ի ձեռի նշանի ծանուցեալ լիցի՝ ևս նմա թլփատութիւն, անթլփատութեանն կնիք հաւատաց այնր, որ յանթլփատութեանն», անկասկած այստեղ թլփատութիւնն այն նշանն է, որ դեռ ևս անթլփատ եղած ժամանակ հաւատացող Արքահամի համար հաւատոյ կնիք պիտի դառնար. բայց Վերէր թարգմանում է. «Damit nun die Vortrefflichkeit seines Glaubens durch ein Zeichen bestätigt werde, gab ihm Gott die Beschneidung, nachdem die Unbeschnittenheit das Siegel des Glaubens dessen gewesen, der in der Unbeschnittenheit war», և դուրս է գալիս, որ կնիքը թլփատութիւնը չէ, այլ անթլփատութիւնը, — ինչպէս՝ դժուար է ի հարկէ հասկանալ. Կամ՝ Գլ. 31, հեղինակը պարզ կերպով ասում է. Բանը մարմին եղաւ նրա համար, որպէս զի մեզքը նոյն մարմնի միջոցաւ խափանուելով, որով մեր վերայ իշխել էր՝ «այլ մի ևս լիցի ի մեզ» — այլ ևս չլինի մեր մէջ. Վերէր թարգմանում է. «auch in uns ein anderer sei» — նաև մեր մէջ մի ուրիշը լինի. «այլ» բառն ի հարկէ սխալ հասկանալով և չգիտես ինչ միտք դնելով այս նախադասութեան մէջ, որի համար ստորև էլ վկայութիւն է բերում Հոռմ. Գ. 8 շ. Այդպէս և Գլ. 55, «Եւ սքանչելի խորհրդակից զնա ասէ կամ Հաւրն» — թարգմանում է. «Auch wunderbarer Ratgeber nennt er ihn oder Ratgeber des Vaters», առանց ուշադրութիւն դարձնելու, որ կամ-ը այստեղ նորա համար է.

որ մի քանի տող ցած նոյն Որդու համար ասած է, թէ նաեւ մեր խորհրդակիցն է (կամ Հաւր, կամ մեր): Անհատականաւ ի մանաւանդ, թէ ինչպէս Գլ. 5, «իսկ Բանն յաւդացուցանէ զՀոգին» թարգմանել է. «das Wort den Geist wehen machte, երկի «յաւդացուցանէ» ի մէջ ող քառը երեակայելով, կամ թէ՛ ինչպէս է ըմբռնել Գլ. 78. «Աստուծաւ և զպատճառս մահու նորա հատուցանէ», որ թարգմանել է. «Hierselbst erfüllt er auch die Ursachen seines Todes», ինչպէս է հնարաւոր համարել Գլ. 86. «ի բոլոր աշխարհ քարոզեցին զՈրդին Աստուծոյ եկեալ ի շարչարանս, կրեալ ի խափանումն մահու և ի կենդանործութիւն մարմնոյն»—թարգմանել. «in der ganzen Welt die Predigt von der Hingabe des Gottessohnes in das Leiden, in seine Vernichtung im Tode und zur Wiederbelebung seines Leibes haben erschallen lassen»: Հեղինակն ասում է՝ Առաքեալները քարոզեցին, թէ ինչպէս Աստուծոյ Որդին շարչարուեց մահը խափանելու և մարմինը (այսինքն մարդկային մարմինն ընդհանրապէս) կենդանացնելու համար, իսկ թարգմանիչն ասում է, թէ առաքեալները քարոզը Աստուծոյ Որդու շարչարուելու, մահուամբ ոչնչանալու և իւր մարմինը վերստին կենդանացնելու մասին էր:

Ահա այսպիսի թարգմանութիւնն է, որ բառ Հ. Վարդանեանի՝ «Իրենեայ սկզբունքներուն ու վարդապետութեան թիւր հասկացողութիւնը» պիտի փարատէ և ուղիղ հասկացողութիւն տայ: Զարմանալի մի կէտ ես այն է, որ թարգմանիչը, ինչպէս ասած յիշած օրինակներից էլ երևում էր, ինքն իւր նկատմամբ իսկ հետևողական չի մնում. օրինակ, Գլ. 55-ի վերջում «սքանչելի խորհրդակից» թարգմանում է «Wunderbarer, Ratgeber», իսկ անմիջապէս յետոյ Գլ. 55-ի սկզբում «wunderbarer Ratgeber», որ նոյնը չէ ի հարկէ: Եթէ նա բոլոր մեր ցոյց տուած սխալներն անէր հայերէնից առաջին անգամ որ և է բան թարգմանած ժամանակ, հասկանալի կլինէր: Մենք յաւակնութիւն չունինք պնդելու, թէ մեր թարգմանածը բոլոր կէտերում անպայման ուղիղ է. ինչպէս անգլիերէն թարգմանութեան հրատարակութիւնից կերեայ, քիչ տեղեր չկան, որ ես ինքս յետոյ տարրեր կերպով եմ ըմբռնել և փոխադրել: Բայց ունենալ աչքի ասած պատրաստ թարգմանութիւն, կամենալ ըստ Հ. Վարդանեանի «երկնաբերձ» առաւելութիւն ունեցող մի նորը տալ, և հնի ուղիղ ըմբռնումները ակնյայտի կերպով թիւրել, — մի տարօրինակ երևոյթ է, որ կմնայ դարձեալ նոյն Հ. Վարդանեանին քաջատրել: Յամենայն դէպս կարող ենք վստահութեամբ ասել, դուք է նոր թարգմանութիւնն, իբրեւ բուն գերմանացու գործ՝ աւելի տահուն ոճ ունի, աւելի դիւրաւ կկարդացուի և աւելի յարմար կլինի սովորական ընթերցանութեան կամ զպրոցական դործածութեան

համար. բայց շատ կսխալուին նախ, որոնք կուզենան դիտական տեսակէտով նորանից օգտուել և նորա միջոցաւ գաղափար կազմել բաւ օրինակի մասին: Անք էլ կարող էինք մեզնից ենթադրութիւններ անել և, աւելի ազատօրէն թարգմանելով՝ դուք, համեմատաբար աւելի կոկ գերմաներէն տալ, բայց դիտմամբ աշխատել ենք. երբեմն մի քանի համար ժամերով շարժարուել, որպէս զի բաւ կարելւոյն ճիշտ և բառացի կերպով վերարտադրած լինենք հայերէնի իմաստը և դորանով հնարաւորութիւն տուած եւրոպացի գիտուններին՝ մտքի մէջ, համապատասխան յունարէնը կարգադրել Ուրիշ կերպ և կարծում ենք չպիտի հասկանար իւր պարտականութիւնն այսպիսի մի դրուածքի թարգմանիչը, մինչդեռ Վերէր ուրիշ կերպ է հասկացել:

Անում է մի քանի խօսք ևս այն «բաղձաթիւ ուղղագրական առաջարկութիւններու» մասին առել, որոնցից կարելիութեամբ նոր թարգմանութեան ծանօթութիւնների մէջ գետնադրուած լինելուն համար՝ ըստ Հ. Վարդանեանի առանձին արժէք է ստանում այդ թարգմանութիւնը. թէպէտ «Բնականաբար հայ բնագրին քննադատական սրբադրեալ հրատարակութեան հարկը զգալի կըմնայ դեռ»: Անգ համար պարզ չէ, ինչպէս վերև ակնարկեցինք, թէ ինչ է հասկանում Հ. Վարդանեան «քննադատական սրբադրեալ հրատարակութիւն» առելով, երբ մեր առաջ միայն մի ձևագիր օրինակ կայ, միթէ նա կարծում է, թէ մենք իրաւունք ունէինք այն ուղղագրութիւնները, որ ինքն և ուրիշները առաջարկել են, բնագրի մէջ մտցնել, կամ պարտաւոր էինք այդպիսի ուղղագրութիւններ ենթադրել և ծանօթութիւնների մէջ նշանակել. այդ ժամանակ մեր հրատարակութիւնը քննադատական և սրբադրեալ կլինէր, թէ հայերէն քննադատական հրատարակութիւն կարող են տալ միայն գերահռչակ գիտնական: Ախիթարեան հայերը, իսկ ա. Էջմիածնի խեղճ միաբանների հրատարակութիւնը քննադատական համարուել չի կարող: Ասիթ կունենանք երևի մի անգամ ցոյց տալու, թէ որչափ քննադատական են Ախիթարեան հայերի հրատարակութիւնները և ինչ ուղղագրութիւնների կկարօտեն, եթէ Հ. Վարդանեանի մեր հրատարակութեան վրայ դրած չափն իրենց վրայ դարձնենք: Առաջին հրատարակութեան բնագիրն իմ ձեռքով չէ արտագրուած, հարկաւոր է եղել տպագրի նման տառերով արտագրել այն, որպէս զի եւրոպայում հնչաութեամբ տպուէր, և եթէ հակառակ ամենայն ուշադրութեան, մի քանի սխալներ սպրդել են, միթէ տարօրինակ է այդ և խիստ դատադարձելի փարիզեան երկրորդ հրատարակութեան մէջ սրբագրուած է ինչ որ կարելի էր: Իսկ կամայական սրբագրութիւն երբեք ի հարկէ թոյլ չէինք տալ մեզ, այլ աշխատել ենք ձևագրի առածը վերարտադրել հնարաւոր ճշտութեամբ և

աւելորդ ենք համարել մեր ենթադրութիւններն էլ նշանակել այն տեղերում, ուր քնադիրը տանելի իմաստ ընծայում էր: Սրբագրութիւն առաջարկել ենք, և դարձեալ մենք ինքներս չենք արել՝ այնպիսի դէպքում միայն, երբ մի հաստատուն կոտան ունէինք դորա համար. ինչպէս Գլ. 90 «նչ ի հնութեան մերոյ» կարգաւ «գրոյ», որ Վերէր մեր առաջարկածի պէս էլ թարգմանում է, սակայն ծանօթութեան մէջ անհասկանալի միամտութեամբ այնպէս է ցոյց տալիս, իբրեւ թէ ինքն է արել այդ ենթադրութիւնը—«ich glaube, die Worte sind zu korrigieren in hnuthean groy»:

Վեց մանր սրբագրութիւններ առաջարկել է Հ. Ակինեան վերեջիշուած յօդուածի մէջ: Դոցանից Գլ. 60 «Նուաստի յերկրի» պարզ տպագրական սխալ է. ձեռագրի մէջ արդէն «Նուաստից երկրի» է, ինչպէս և մենք թարգմանել ենք. «der Elenden der Erde»: «Այլ աւրինակաբար» Գլ. 31 տպուած է, որովհետեւ այդպէս առանձին էլ գրուած է ձեռագրի մէջ. ինչո՞ւ պէտք է անպատճառ սխալ համարել այդ, և ուղիղը՝ «այլօրինակաբար». Գլ. 61 «զաննման ազգեացն» ի հարկէ ուղիղ կլինէր «զաննմանազգեացն» գրել: Գլ. 74 «Իսկ Պրդատոսի Հերովդեա» անուշադրութեան սխալ է. անկասկած պէտք է լինէր. «Իսկ Պրդատոս ի Հերովդեա». բայց Գլ. 3 «հաւատագով»—հասկանալի չէ, թէ ինչո՞ւ պիտի գրուի՝ «հաւատա գով». եթէ առաջինի իմաստը մութ է, երկրորդը ո՞չ մի իմաստ չի տալիս. երկու յոգնակի առաջին դէմքով բայերի մէջ «հաւատա» ինչ է նշանակում. ո՞վ հաւատայ: Այսպէս և նոյն Գլ. «զմիշտն և զյարէն» — «զմիշտն և զյար էն» կարգալով «das ewig und beständig Seiende» թարգմանել, ինչպէս, այդ ընթերցուածը Հ. Ակինեանից իւրացնելով՝ թարգմանում է Հ. Վարդանեան (Հանգէս Ամսօրեայ 1910, հոկտեմբեր, եր. 303) և նորա հետևութեամբ Վերէր, կարծում ենք՝ այն դէպքում կարելի էր, երբ սրբագրութիւնը առաջ տանենք և դարձնենք «զմիշտն և զյարն է» կամ «զմիշտ և զյար էն». բայց մենք այդ փոփոխութիւնը ո՞չ միայն անիրաւացի, այլ և անտեղի ենք գտնում. որովհետեւ «է», գլխատառով, պարզապէս Աստուծոյ համար ընդունել, ինչպէս Հ. Վարդանեան ընդունում է, կնշանակէ կարգալ. «զմիշտն և զյարն Աստուած աստուածանալ», որ միտք չունի և նախընթացի հետ չի յարմարւում, ուր խօսքը հաւատացեալների մկրտութեամբ մշտնջենաւոր Աստուծոյ որդիք և յաւիտենական կեանքի ժառանգորդներ լինելու մասին է. «աստուածանալ» բառը «für Gott gehalten werde» թարգմանելով էլ ոչինչ չի շինուում, փոխանակ «Gott werde», ինչպէս մենք ենք թարգմանել. և ինչո՞ւ պէտք է «աստուածանալ» նշանակէ՝ «իբրեւ Աստուած համարուել»: Մենք մտածել ենք, որ հայերէնի թարգմանիչը յունարէն մի բարդութիւն կամեցել է «յարէն» բառով արտայայտել. և այդպէս կարգացուած նախադասութեան մէջ շատ

պարզ միտք է դանում, օրինակ, տրոֆ. Սաղարդա, որ համարում է այն Գնոստիկեան ուսմանց դէմ ուղղուած և թարգմանում է. «чтобы вѣчно и неизмѣнное содѣлалось Богомъ».

Գանձ վերջապէս այն «ընտղրական օրրադրութիւններին», որ Հանդէս Ամս. 1910, նոյեմբեր, եր. 326 առաջարկել է Հ. Վարդանեան և օրոնցից յատկապէս օգտուել է Վերէր:

Որովհետեւ մեր գրութիւնը շափազանց երկարեց՝ կրաւակահանանք նորա 8 օրրադրութիւններից միայն 3 աւելի կարեօրները վերցնելով:—Գլ. 18 «տարրաւրէն», կարգալ՝ «տարաւրէն» ամենին կարիք չկայ, քանի որ «տարրաւրէն»՝ արդէն շատ յարմար իմաստ ունի. Իրենէօսի դարում Գնոստիկեան շարժումների աթիւ տարրերի մասին խօսել խիտ սովորական էր. հրեշտակների և մարդկանց դուստրների՝ իբրեւ զանազան տարրերի, խառնակութիւնը ամենայն պատշաճութեամբ կարող էր «տարրաւրէն»=տարերային կոչուիլ, ինչպէս մենք հասկացել ենք, և մեզանից յետոյ ուրիշները:—Գլ. 21. «եւս է. ի վախճան յաւիտենիս ծաղկեաց երևեցելոց Տեառն ի կոչմանէն հեթանոսաց» կարգալ. «եւ Սէմ ի վախճան յաւիտենիս ծաղկեաց երևեցելոյ Տեառն ի կոչմանէն հեթանոսաց» ** և թարգմանել. «Auch Sem blühte am Ende der Zeiten, indem Gott ihnen die Berufung durch Erscheinung des Herrn erweitert hat»—շափազանց է սրամիտ, որպէս զի թոյլատրելի համարուէր ***: Լրջօրէն հարց տուել է իրեն արդեօք պատուական քննադատը, թէ այսպէս կարգացուած և այսպէս թարգմանուած խօսքերը ինչ են նշանակում ընդհանուր կապակցութեան մէջ. ինչ է նշանակում Սեմի ծաղկելը ժամանակի վերջում, քանի որ այդպիսի բան գոյութիւն չունի, քանի որ Իրենէօսի խօսքը Յարեթի մասին է, և ինչպէս շարունակութեան մէջ նրա տուած բացատրութիւններից պարզ երևում է, Յարեթ այլաբանական մեկնութեամբ ընդունուում է իբրեւ «կոչումն հեթանոսաց»՝ Պօղոս առաքեալի տուած իմաստով ****

* Վերէր գրում է «Tarronen» տառադարձութեամբ:

** Այստեղ էլ Վերէր «i koghmane heithanosats» տառադարձութեամբ է գրում:

*** Վերէր զգուշացել է օգտուել այս հանճարեղ առաջարկութիւնից եւ իրաւամբ հարցական է դրել ihnen բառի մօտ, որ ի հարկէ ոչինչ չի նշանակում. բայց մոռացել է, որ Erscheinung բառի մօտ էլ die յօդ պէտք էր:

**** Վերէր այստեղ «կոչումն հեթանոսաց» ուղիղ Թարգմանելով հանդերձ, «die Berufung der Heiden», Գլ. 89 տալիս է «die Benennung für Heiden» անիմաստ Թարգմանութիւնը, մոռանալով այդ արտայայտութեան թէ յայտնի նշանակութիւնը եւ թէ իւր նախորդ Թարգմանութիւնը:

(Հոտմ. Թ, 24. Ա, Կորնթ. Ա, 24. հմմտ. Գաղ. Գ, 14), որ ժամանակի վերջում (Եբբ. Ա, 2) բռնել էր Սեմի, այսինքն Ասատուծոյ խակական ժողովուրդ համարուող Իսրայէլի տեղը Ի՞նչ դորժ ունի այսպիսի հարցերի հետ մի քննադատ, որ ինքը երեակայական ամբողջներ կերտելով զբաղուած՝ վստահանում է մեր բառացի թարգմանութեան համար ասել. «Այս հատուածը թարգմանուած չէ, այլ նոր կերտուածն»։—Իւր սրամտութեան գաղաթնակէտին հասնում է սակայն Հ. Վարդանեան, երբ Գլ. 81 չառնալ երեսուն զգաւորին սատերսն» խօսքի համար ենթադրում է, թէ հայերէնի թարգմանիչը շփոթել է *νοῦς* (օրէնք) և *νοῦς* (գաւառ) բառերը, թէ նա պէտք է թարգմանած լինէր. չառնալ զօրինաց սատերսն, որ է ըսել, ասեալ զերեսուն սատերսն, որ ի Հին օրէնս ի բերանոյ Երեմեայ յառաջագոյն գուշակեցաւ»։ Վերէր զգուշանում է ի հարկէ նաև այս փառաւոր մեկնութիւնից օգտուելուց. բայց զարմանալի է այնուամենայնիւ, թէ ինչպէս լուրջ է ընդունում այն և ծանօթութեան մէջ յառաջ բերում. ինչպէս չի մտածում, որ Իրենէոս չէր կարող Հ. Վարդանեանի չափ սրամիտ լինել և կամ ընթերցողին այնպէս սրամիտ ենթադրել, որ «օրինաց սատերք» ասելով հակականար Հին օրէնքի—Երեմիայի մարգարէութեան, յատկապէս գլուխ ԼԲ, համար 9 յիշուած արժաթը՝ Այսպիսի խաղերով գուցէ կարելի է աշակերտական փարժութեանց միջոցին ընկերներին զարմացնել. բայց հրապարակ ելնել՝ դոցանով եւրոպական բազմաթիւ մասնագէտների քննադատական բովից անցած մի գրուածք ոչնչացնելու և տեղը «սրբազրեալը» դնելու—ունայն և արգահատելի աշխատութիւն է։

և. եպս.

